OSCE Organization for Security and Co-operation in Europe Office in Yerevan




# Արարատի Օրհուս կենտրոնի 2013թ. կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն

# /փետրվար-դեկտեմբեր/

# Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. ***Նախաբան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին,***

Արարատի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Արարատի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է մի քանի միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

***Միջոցառում Քանակ 11***

| Անվանումը | քանակը | տոկոս |
|---|---|---|
| Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ | - | - |
| Հանրային լսումներ | 1 | - |
| Գործնական աշխատանքներ և արձագանքներ | - | - |
| Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ | 8 | - |
| Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ, հանդիպումներ | 6 | - |
| Շնորհանդես, ֆիլմի դիտում | 2 | - |
| Միջազգային հանդիպումներ, սեմինարներ | - | - |
| Փորձագիտական խորհրդի նիստեր | 1 | - |
| Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը | 283 | - |
| *-ՀԿ ներկայացուցիչները* | 5 | % |
| *-պատանիներն ու երիտասարդներ* | 254 | % |
| *-ԶԼՄ ներկայացուցիչներ* | 1 /տեղեկատվությունը է տրամադրվել E-mail-ի միջոցով/ | % |
| *-տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ* | 5 /ԳԱՄԿ, ՏԻՄ, ուսուցիչներ, հկ-ներ, | % |

| | | |
|---|---|---|
| *-Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/* | 18 /հիմնական այցելուներ, կամավորներ, հկ ներկայացուցիչներ/ | % |

***Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը***

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է 57 մարդ:

ԶԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/ Արարատ, Երկրագործ, Ագրոլուր

Փորձագետների խորհրդի նիստ

Տեղի է ունեցել փորձագետների խորհրդի մեկ նիստ, որի ժամանակ հարկ էր առաջացել խորհրդի անդամների համալրումը կենտրոնի նպատակաուղղված աշխատանքների պլանավորման համար: Խորհուրդը համալրվել է 5 հասարակական և 5 պետական կառույցի ներկայացուցիչներով:

## 2. *Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,*

### 2.1 ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

#### *2.1.1 կատարված գործողություններ,*

*- Կենտրոնում ռումինական փորձագետների կողմից Արարատի համայնքի հասարակության տարբեր շերտերի մասնակցությամբ ներկայացվեց <<Սևծովյան ավազանի երկրների 2007-2013թ.թ. համատեղ գործողությունների ծրագիրը>>, որի ընթացքում լուսաբանվեց հետագա կատարվելիք աշխատանքերը կապված ք. Արարատում թափոնների տեսակավորման, կառավարման նորարական փորձի ներդրման հետ:*

#### *2.1.2 Ձեռք բերված արդյունքներ:*

***Արդյունքում այստեղ պահպանվեց Օրհուսի կոնվենցիայի***

*- «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության սկզբունքները:*

*Ներկաները տեղեկացան, որ Արարատի համայնքում սկսվելու թափոնների կառավարման և տեսակավորման նորարական փորձի ներդրում և կառուցվելու է կոմպոստ: Ծրագիրը իսկապես ոգևորեց մասնակիցներին, և նրանք նշեցին, որ իրենք էլ կփորձեն աջակցեն այդ ծրագրի իրականացմանը:*

## 2.2 ՆՊԱՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

### 2.2.1 կատարված գործողություններ,

*- Գրություններ են ուղարկվել մարզի արտադրական ձեռնարկություններին նրանց գործունեության, բնապահպանական վճարների մասին տեղեկատվության տրամադրման վերաբերյալ: Ստացվել են պատասխանները, ըստ որի նրանք չեն տիրապետում նման տեղեկատվության, և այդ տեղեկատվությունները տեղադրված են ԲՆ կայքում:*

*Գրություն է ուղարկվել ԲՆ, Արարատի մարզի ազդակիր համայնքների վերաբերյալ: Պատասխանը ստացվել է, տարածվել շահագրգիռ կողմերին, ուղարկվել է մարզպետարան ԲՆ վարչություն: Պատասխանը տեղադրված է [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում:*

### 2.2.2 Ձեռք բերված արդյունքներ:

*- Ստացված գրությունների համաձայն նախատեսվում կազմակերպել քննարկումներ, համապատասխան տեղեկատվությունը՝*

*մասնավորապես ազդակիր համայնքների վերաբերյալ , վերլուծելու և հասարակությանը այդ քննարկումներին ներգրավվելու համար:*

## 2.3 ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լսումներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

***կատարված գործողություններ ,***

*- Կենտրոնը մասնակցել է «Ասիական Զարգացման բանկի» (ԱԶԲ) կողմից ֆինանսավորվող ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (ՋևՋ) համակարգերի բարելավման հետ կապված հասրարակական լսումներին, որոնք տեղի են ունեցել ք.Արարատում, ք.Վեդիում և գ.Արարատում :*

### *2.3.1 Ձեռք բերված արդյունքներ:*

*-Կենտրոնի կողմից տարածվել է տեղեկատվություն Ասիական Զարգացման բանկի» (ԱԶԲ) կողմից կատարվող ծրագրի մասին հասարակության լայն շրջաններում և շահագրգիռ կողմերին, ինչպես նաև լուսաբանող թերթիկներ են փակցվել քաղաքի տեսանելի տեղերում :*

## 2.4 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շաբաթօրյակներ և այլն ):

### *2.4.1 կատարված գործողություններ,*

*-Կենտրոնը ևս անմասն չի մնացել համայքնում կատարվող բնապահպանական միջոցառումներին և իր կամավորների հետ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել քաղաքում կազմակերպված*

*շաբաթօրյակներին, սանմաքրման աշխատանքներին և ծառատունկերին:*

### 2.4.2 Ձեռք բերված արդյունքներ:

*-Արդյունքում նմանատիպ միջոցառումները նպաստել են փոխհամագործակցության և փոխվստահության ձեռքբերման: Ամենակարևորը, հասարակության մասնակցությունը նման նախաձեռնություններում արժևորում է յուրաքանչյուր անձի պատասխանատվության զգացումը շրջակա միջավայրի հանդեպ :*

## 2.5 ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորման գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է էկոկրթական դասընթացներ:

### 2.5.1 կատարված գործողություններ

*- Տեղի են ունեցել բնապահպանական սեմինարներ, այցելություններ կենտրոն, մարզի էկոլոգիական վիճակի մասին տեղեկատվության հարցումներ*

### 2.5.2 Ձեռք բերված արդյունքներ:

*-Հանրությունը ավելի լավ է տեղեկացված լինում այն մասին, թե ինչ է տեղի ունենում իր շուրջը, ինչ բնապահպանական խնդիրներ կան, առաջարկություններ են տալիս, փորձում են վերհանել խնդիրները՝ հասկանալով որ իրենց իրազեկվածությունը և մասնակցությունը նույնիսկ աննշան խնդրի շուրջ կարող է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի համար հնարավոր ռիսկերն ու վտանգները: Բացի այդ բնապահպանական կրթական զարգացվածությունը ապագայում կկանխի զրբալ բնապահպանական շատ հիմնախնդիրներ:*

## 2.6 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացնում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

### *2.6.1 կատարված գործողություններ,*

*-Կենտրոնի ամենօրյա աշխատանքի արդյունքում կատարվում է կենտրոնի գույքի նպատակային օգտագործումը և պահպանումը: Անհրաժեշտության դեպքում լրամշակվում է տարեկան աշխատանքային պլանի նախագիծը: Կազմվում է տարեկան աշխատանքային հաշվետվությունը:*

*Հարկ եղած դեպքում կենտրոնը տրամադրում է տեխնիկան էկոլոգիական սեմինարներ անցկացնելու համար:*

### *2.6.2 Ձեռք բերված արդյունքներ:*

*-Արդյունքում աշխատանքային պլանի հիման վրա կազմված հաշվետվությունները կենտրոնի աշխատանքը դառձնում են ավելի թափանցիկ և վստահելի, որի շնորհիվ հնարավոր է դառնում աշխատել հասարակության ավելի լայն շերտերի հետ:*

3. **Ծրագրի ֆինանսական հաշվետվություն:** /կարող եք տեսնել կից ֆայլով/
4. **Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:**

ԵԱՀԿ

Մարզպետարաններ

Քաղաքապետարաններ /ՏԻՄ-եր/

Նախարարություններ

ՀԿ-ր

Քաղաքացիներ

ԶԼՄ-ներ

Դպրոցներ և ուսումնական հաստատություններ

Կամավորներ

## 5. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ

*- Ողջ գործունեության ընթացքում ավելի է մեծանում այն տեսակետը, որ այսօր ամեն ինչ այլ է: Երիտասարդությունը ավելի ու ավելի է ներգրավվում բնապահպանական խնդիրների լուծման, վերհանման գործընթացներում: Ամեն անգամ և ամենուր կազմակերպվում են տարբեր միջոցառումներ շրջակա միջավայրի խնդիրների և պահպանման հետ կապված: Շատ հատկանշական է, բնապահապանական օրերի նշումը, որը դարձել է սովորություն մեր հասարակության մեջ՝ օրինակ ինչպես շատ երկրներում, այդպես էլ մենք տոնում ենք Շրջակա միջավայրի պահպանության օրը, որը նշվում է ամեն տարի հուլիսի 5-ին: Սակայն մեկ կամ մի քանի օրերի նշումը տարվա մեջ բավական չէ բնապահպանական խնդիրների լուծման համար, անհրաժեշտ է մարդկանց անտարբերությունը վերացնել և հասնել նրան, որ յուրաքանչյուր քաղաքացի, անկախ տարիքից և սեռից գիտակցի իր պարտքը բնության հանդեպ:*

*Եվ իսկապես, ուշադրությունը շրջակա միջավայրի հանդեպ պետք է դառնա դաստիարակություն, բնավորության գիծ, կենսակերպ:*

## 6. Ծրագրի շրջանականերում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:

*- Աշխատանքի ընթացքում որպես այդպիսին դժվարություններ չեն եղել, բայց հաճախ կարիք է նկատվել աշխատանքի մեջ ավելի նորարական մեթոդի կիրառմանը /դա կարող է վերաբերել նաև վերապատրաստումներին, միջազգային բնապահպանական փորձի փոխանակմանը, այլ երկրների բնապահպանական ոլորտում հաջողված օրինակների կիրառմանը/: Դա ավելի կներգրավվի հասարակությանը բնապահպանական հարցերում, և բացի այդ աշխատանքը կդառնա էլ ավելի հետաքրքիր ու նոր գաղափարներով լի:*

## 7. Ծրագրի գնահատում և շարունակականություն

*- Կենտրոնը իր գործունեությամբ արդեն հասցրել է վստահություն ձեռք բերել համայնքում և մարզում: Կենտրոն են դիմում բնապահպանական բազմաթիվ հարցումներով՝ մարզի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, համացանցից և գրադարանից օգտվելու համար, ինչպես նաև բնապահպանական սեմինարներ անցկացնելու համար: Այն հարթակ է ՏԻՄ, պետական այլ կառույցների և հասարակության տարբեր շերտերի միջև կապի ստեղծմանը: Կենտրոնի*

գործունեության նպատակն է աջակցել մարզում բնապահպանական տեղեկատվության հասանելի դարձնելուն, խթանել հասարակայնության մասնակցությունը բնապահպանական որոշումների կայացման գործընթացում, նպաստել բնապահպանական հարցերում հասարակայնության համար թափանցիկ միջավայրի ստեղծմանը, այդ ոլորտում արդարադատության մատչելիությանը, ուստի նաև երկրի ընդհանուր ժողովրդավարացման ու կառավարման բարելավմանը և ի վերջո քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Գործունեության մեջ առանձնապես կարևորվում է նաև բնապահպանական կրթությանը՝ խթանելով հասարակության, մասնավորապես երիտասարդության ավելի ակտիվ մասնակցությանը շրջակա միջավայրին առնչվող գործընթացներին:

Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքերը՝ կարևորվում է կենտրոնի աշխատանքային գործունեության շարունակականությունը:

8. **Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:** /կարող եք տեսնել կից ֆայլով, այսինքն այստեղ կցելու եք Ձեր Statistics Excel-ի ֆայլը//

*ԱՐԱՐԱՏԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ*

*ՀՈՒՆՎԱՐ - ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

| N | ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ, ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ | ԱՐԴՅՈՒՆՔԸ, ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԱՄՍԱԹԻՎԸ | ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ | | | ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԼՍՈՒՄ /ԱԶԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ/ | ՏԵՍԱԿԸ | | | | ՄԱՍՆԱԿԻՑ - ՆԵՐԻ ԹԻՎ | | | ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱՐՑՈՒՄ | | ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՕՐՀՈՒՍ | ՀԱՄԱՏԵՂ | ԱՅԼ | | | Տեղեկատվության մատչելիություն | Հասարակության մասնակցություն | Արդարադատության մատչելիություն | ԷԿՈԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՊ. ԱԿՑԻԱՆԵՐ, ԾԱՌԱՏՆԿՈՒՄ, ՄՐՑՈՒՅԹՆԵՐ և ... | տղամարդ | կին | ընդամենը | | Ուղարկված | Ստացված /պատասխան/ | ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՕՐՀՈՒՍԻՑ | ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ | ՏՊԻՉԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ | ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ | ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ | ՖԻԼՄԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 1 | Արարատի Օրհուս կենտրոնի խորհրդի կազմը կհամալրվի | Կենտրոնը համալրվեց խորհրդի նոր կազմով, որը կխթանի արդյունավետ աշխատանքին | 10.04. 2013 | | 1 | | | | | | | | | 10 | 10 | | | | | | | | 5 | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Հանդիպում Արարատի ակտիվիստների հետ | Արդյունքում ակտիվ երիտասարդները դերային խաղերի միջոցով ավելի ակնհայտ պատկերացեցին բնապահպանական խնդիրների առկայությունը և դրանցում իրենց ներգրավվածության կարևորությունը | 10.04. 2013 | | 1 | | | | 1 | | | 1 | 5 | 28 | 33 | | | | | | | | | |
| 3 | Արարատ ու Վեդի քաղաքները ջրամատակարարման նոր համակարգ կունենան | տեղեկատվությունը տարածվեց ք. Վեդի, ք. Արարատ և գ. Արարատ համայնքների բնակիչների շրջանում, վերջինները հայտնեցին իրենց մտահոգությունները և առաջարկություններ արեցին: Կազմակերպիչները ընդունեցին դրանք որպես ի գիտություն | 8.04.2 013 | 1 | | | | 1 | 1 | 1 | | | 20 | 49 | 69 | | | | | | | | | |
| *Ընդամենը Ապրիլ* | | | | 1 | 2 | 0 | 0 | 1 | 2 | 1 | 0 | 1 | 25 | 87 | 112 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 5 | |
| 4 | Սեմինար Երևանի Օրհուս կենտրոնում Հայաստանում սնդիկի հիմնախնդիրները վերաբերյալ | Ներկաները տեղեկացան սնդիկի վտանգավոր հետևանքների մասին | 18.09. 2013 | | 1 | | | | | | | | | | | | | | 3 | | | 2 | 7 | |
| *Ընդամենը սեպտեմբեր* | | | | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3 | 0 | 0 | 2 | 7 | |
| 5 | Ինչպես կարելի է դիմել ԵՄ ֆինանսավորման համար | շահագրգիռ կողմերը հարցերի միջոցով ստացան իրենց շատ հուզող պատասխաններ | 24.10. 2013 | | | 1 | | | | | | | | 37 | | | | | | | | 5 | 9 | |
| 6 | Իրազեկության բարձրացմանն ուղղված սեմինար "Երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի" | ներկաները տեղեկացան ինչպես պաշտպանել իրենց իրավունքները և երբեք չդառնալ խաբեության և կոռուպցիայի զոհ | 28.10. 2013 | | | 1 | | | | | | | 5 | 14 | 19 | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | <u>Գրություն</u> ՀՀ «ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ -ին ազդակիր համայնքներին տրամադրվող բնապահպանակա ն և բնօգտագործման վճարների մասին | պատասխանը ստացվել է. որում ասվում է, որ նրանք չունեն նման տեղեկատվություն | 25,10. 2013 | 1 | | | | | | | | | | | | | 1 | 1 | | | | | | |
| 8 | <u>Գրություն</u> «Արարատցեմենտ» ՓԲԸ-ին ազդակիր համայնքներին տրամադրվող բնապահպանակա ն և բնօգտագործման վճարների մասին | պատասխանը ստացվել է, որ նրանք այդ տեղեկատվությունն ը չեն կարող տրամադրել, որովհետև դա բիզնեսի սեփականությունն է, | 25.10. 2013 | 1 | | | | | | | | | | | | | 1 | 1 | | | | | | |
| 9 | <u>Գրություն</u> ՀՀ Բնապահպանությ ան նախարարություն Արարատի մարզի շրջակա միջավայրի վրա ազդեցություն թողնող ձեռնարկություննե րի և դրանց գործունեության հետևանքով ազդակիր համարվող համայնքների վերաբերյալ | պատասխանը ստացվել է, և լուսաբանվել է | 01,11. 2013 | 1 | | | | | | | | | | | | | 1 | 1 | | | | | | |
| *Ընդամենը հոկտեմբեր* | | | | 3 | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 5 | 51 | 56 | 0 | 3 | 3 | 0 | 0 | 0 | 5 | 9 | |
| 10 | Սեմինար նվիրված էներգախնայողո ւթյան միջազգային օրվան | Սեմինարը տեղի ունեցավ թիվ 2 դպրոցում: Ակտիվ պատանիները տեղեկացան էներգիայի օգտագործման այլընտրանքային տարբերակներին, որը իհարկե խթանում է էկոկրթության զարգացմանը | 14.11. 2013 | 1 | | | | | | | | 1 | 12 | 21 | 33 | | | | 4 | | | 3 | | |
| *Ընդամենը նոյեմբեր* | | | | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 12 | 21 | 33 | 0 | 0 | 0 | 4 | 0 | 0 | 3 | 8 | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Ներկայացվեց <<Սևծովյան ավազանի երկրների 2007-2013թ.թ. համատեղ գործողությունների ծրագիրը>> | Արդյունքում ներկաները տեղեկացան ,որ ծրագրի շրջանակներում ք. Արարատում և շրջակա համայքների համար կսկսվի թափոնների տեսակավորման և կառավարման նորարական տեխնոլոգիաների կիրառումը, կստեղծվի կոմպոստ: | 02.12. 2013 | | 1 | | | | | 1 | | | 5 | 19 | 24 | | | | 1 | | | | | |
| *Ընդամենը դեկտեմբեր* | | | | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 2 | 5 | 19 | 24 | 0 | 3 | 3 | 1 | 0 | 0 | 1 | 6 | |
| Ընդամենը տարեկան | | | | 10 | 2 | 2 | 0 | 1 | 2 | 2 | 0 | 0 | 47 | 179 | 226 | 0 | 3 | 3 | 8 | 0 | 0 | 9 | 35 | 13 |

Արարատի Օրհուս Կենտրոնի համակարգող Հռիփսիմե Սարգսյան

E:mail ripsime-84@mail.ru

Հեռ: 093-06-09-07